Ծուշանիկ Կուրղինյան

Գորտը

Քոթոն իր աչքով տեսավ, թե ինչպես ծանոթներին բաժանեցին իր թխլիկ ձագուկները . ի՞նչ արած . մարդկանց օրենքն այդպես է և ամեն մի օրենք դրված է մարդու շահերը պաշտպանելու համար . . . Քոթոն տեսել է ամեն ինչ և սիրում է հիշել բոլոր կենդանի փաստերը: Օրինակի համար, անցյալ ամառ ծախեցին հորթը՝ կովին թողնելով անմխիթար վիճակի մեջ: Աշնանը ճտերը սրի քաշեցին ու կերան: Խաչի տոնին չարաճճի ուլին կախեցին վառած թոնրի մեջ ու ողջ տեղը ականջը թողին: Ո՞ր մեկը հիշել: Նույնիսկ գետի ձուկը չի ազատվում նրանց ձեռքից . սուր դանակով քերում են խեղճի ցոլուն փշերը, քոթոն աչքով Է տեսել, փորի միջի եղածը կատվին են տալիս ու տապակում՝ մի այնպիսի գարշելի հոտ ձգելով տան մեջ, որ Քոթոյի աղիքները շարվում են կոկորդին:

Ի՞նչ կարող ես անել, աշխարհի տերը որ կա, մարդն է, պրծավ գնաց . . .

Շատ է մտածել Քոթոն, խելքին շատ զոռ տվել, նույնիսկ թաքուն հաչել, օգուտ չի եղել . ո՛ր մեկի վրա հաչել:

Այսպես մեկը մյուսից այլանդակ արարքները շարվում էին Քոթոյի գլխում և նա սրտի դառը կսկիծով էր նայում իր կրծքի տակ կուչ եկած ու անուշ քնած քոթոթին, ի՞նչ է սպասում նրան կյանքում . . .

Մինչ շունը տարված էր իր ժառանգի ապագան զուշակելու հոգսով, ուրախ ու աղմկալի զրույցով տանից դուրս եկան տանտիկինն իր փոքրիկ, լավ կերակրած ու խնամած թոռը գրկին, հարսը և աղջիկները: Աղայի այդ անդրանիկ թոռը Քոթոյի ձագերին շատ էր սիրում . դա մեծ նշանակություն ուներ խելոք շան

աչքում և տեղն եկած ղեպքում սիրում էր պարծենալ իր հարևան ցեղակիցների մոտ:

Բերեք քոթիկին, բերեք, թոռս խաղա, ասաց բախտավոր տատը, նստելով շվաքում դրած հնամաշ բազմոցի վրա: Աղջիկներից ամենափոքրը իսկույն վազեց դեպի Քոթոյի բունը և նրա ցասկոտ հայացքից ազդված մի պահ կանգ առավ:

Մայրիկ, քոթիկը քնած է:

Արթնացրո՛ւ, արթնացրո՛ւ, ծաղրեցին միամիտ աղջկան բոլորը միաձայն:

Քոթոն ինչ-որ մոմռաց քթի տակ և պատրաստ էր մի անհեռատես, հանդուգն քայլի, երբ խոհանոցի լուսամուտից դուրս նետվող տաք ոսկորները գայթակղեցին նրան, և նա իր սխալը հասկացավ միայն այն ժամանակ, երբ իր ձագն արդեն բազմոցի վրա էր:

Փոքրիկ տղան ու շունը խաղում էին այնպես սիրով, կասես հարազատներ լինեին:

Ես դրա դեմ ոչինչ չունեմ, մտածեց հանգստացած շունը և ոսկորները բնի մի անկյունում հավաքելուց հետո նորից հեռու և երջանիկ ժպիտով սկսեց հետևել իր միակ զավակի խաղերին:

Փոքրիկ քոթոթը ուրախությունից ինքն իրեն կորցրեց ու առաջին թաթերը դնելով մանկան կրծքին, համարձակ լիզեց նրա դունչը: Մանուկը վախից ճչաց, մեծերը սաստիկ վրդովվեցին և մի քանի քնքույշ ձեռքեր արագորեն ցույց տվին քոթոթին իր սխալի մեծությունը . . .

Քոթոն հեռվից դիտում էր կատարվածը ու կսկծից շվարած չէր իմանում ինչ դիրք բռնել, որ հետևանքը կորստաբեր չլինի իր վերջին զավակի համար . . .

Ծեծի՛ր, ծեծի՛ր, զավակս, անպիտանին, ասաց հարսը սրբելով ու համբուրելով որդու դունչը, մի լավ ծեծիր, այ այսպես, այսպես:

Մանկիկը ծիծաղելով հետևում էր մոր օրինակին ու թաթիկներով ու տոտիկներով հարվածում շանը: Մոլորված քոթոթը լիզում էր իրեն հարվածող բռունցքները, կամ անվարժ կերպով բողոքում: Ընդհանուր ծիծաղից ու իրարանցումից ջահել հարսն այնպես ոգևորվեց, որ բռնելով քոթոթի ականջից՝ վեր բարձրացրեց և շուռ տալով օդի մեջ՝ նետեց բնի մոտ . . . Ամենքն էլ մնացին զոհ:

Քոթոն լիզում էր, փաղաքշում իր ծեծված ձագին և արտասուքը կուլ տալով մտածում, թե որքան տարբեր են լինում մայրերը կյանքում:

1903 թ.